655.4
4-21

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

# ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

## ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

9965

# УСТАВЪ

## ТИФЛИССКАГО ОБЩЕСТВА

## ИЗДАНІЯ АРМЯНСКИХЪ КНИГЪ.

ТИФЛИСЪ
Типографія М. Д. Ротиніанца.
1892

Дозв. ценз. Тифлисъ, 24-го февраля 1892 г.

Типогр. М. Д. Ротиніанца. Гол. пр., № 41.

370
2012-ԿԱ
655.4
Կ-21
Կյ
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публич. Биб.
7.XII 1922
ИМЕНИ А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
20002
15243
2011

«ՄԵԾ-ԻՇԽԱՆ ՓՈԽԱՐՔԱՆ բարեհաճեց վաւերացնել այս կանոնադրութիւնը:
Գլխաւոր Վարչութեան Մեծաւոր

Գեներալ-Լեյտենանտ Ստարօսելսկի.

1880 յունուարի 31
Թիֆլիզ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ

## ԹԻՖԼԻԶԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

## I

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ, ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

§ 1) «Թիֆլիզի ընկերութիւնը հայերէն գրքերի հրատարակութեան» հիմնւում է Թիֆլիզում նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանած գրքեր:

**Ծանօթ.** Ընկերութեան հրատարակութիւնները ենթարկւում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութեանց:

 17348-ա2

§ 2) Ընկերութիւնը կազմում են՝ իսկական, մշտնջենաւոր, պատուոյ և աշխատակից-անդամներ։ Անդամ կարող են լինել երկու սեռից։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

§ 3) Ընկերութեան դրամական միջոցներն են՝ ա) տարեկան և միանուագ վճարները. բ) Ընկերութեան տպագրութիւնների վաճառումից գոյացած գումարը և գ) թատրօնական ներկայացումներից, կօնցէրտներից, հրապարակական դասախօսութիւններից և այլ՝ օրէնքով թոյլ տուած ձեռնարկութիւններից կայացած արդիւնքը։

## II

## ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ, ՆՈՑԱ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ ԵՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

§ 4) Իսկական, մշտնջենաւոր և աշխատակից-անդամ ընտրում է Վարչութիւնը, իսկ պատուոյ անդամ ընտրում է Ընդհանուր ժողովը։

§ 5) Պատուոյ անդամ ընտրւում են այն անձինք, որոնք իւրեանց անձնական արժանաւորութեամբ կամ իւրեանց հասարակական դրութեամբ կարող են առանձնապէս օգուտ տալ Ընկերութեանը։

§ 6. Աշխատակից-անդամ ընտրւում են այն անձինք, որոնք իւրեանց աշխատանքով կամ գիտու-



թեամբ կարող են Ընկերութեանը օգտակար լինել։ Աշխատակից անդամները ընտրւում են մի տարով։

§ 7) Այն անձինք, որոնք միանուագ նուիրում են Ընկերութեանը ոչ պակաս քան հարիւր րուբլի, կարող են մշտնջենաւոր անդամ ընտրուել։

§ 8) Իսկական անդամը վճարում է տարեկան վեց րուբլի։

Ծանօթ. Այն իսկական անդամը, որ վեց ամսուայ ընթացքում չէ վճարել իւր տարեկան վճարը, համարւում է Ընկերութեան անդամակցութիւնից հրաժարուած։

§ 9) Ընկերութեան ընդհանուր ժողովների մէջ ներկայ գտնուող ամեն կարգի երկսեռ անդամները ընտրողական ձայն ունեն և ընտրելի են Ընկերութեան ամեն պաշտօնների համար։

## III

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ ԵՒ ՆՈՑԱ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

§ 10) Ընկերութեան գործերը կառավարում են՝ ա) Վարչութիւնը և բ) Խմբագրական մասնաժողովը։

§ 11) Վարչութեան պաշտօնական անձինքն են՝ նախագահ, փոխ-նախագահ, երկու անդամներ, քարտուղար, գանձապահ և գրապահ։

§ 12) Վարչութիւնը վարում է Ընկերութեան տնտեսական մասը, քննում է նորա դրամական հաշիւները և գումարը, պաշտպանում է, ուր պէտք է, նորա շահերը, պատրաստում է տարեկան ընդհանուր հաշիւը Ընկերութեան աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին, ներկայացնում է ծախուց հաշիւը մօտաւորապէս և հըսկում է Խմբագրական մասնաժողովի ընդունած գրքերի տպագրութեան մասին։ Բոլոր բանակցութիւնները որևիցէ հաստատութիւնների և անձանց հետ Վարչութեան կողմից են լինում։

§ 13) Վարչութեան նախագահը հսկողութիւն ունի, որ ճշտութեամբ կատարուին այս կանոնադրութիւնը և ընդհանուր ժողովի, Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի վճիռները։

§ 14) Նախագահի բացակայութեան ժամանակ նորա պաշտօնը վարում է փոխ-նախագահը։

§ 15) Վարչութեան քարտուղարը կազմում է ընդհանուր ժողովի և Վարչութեան նիստերի արձանագրութիւնները։ Նա վարում է դիւանական գործերը և պահում է դրութիւնները։

§ 16) Վարչութեան գանձապահը վարում է Ընկերութեան դրամական գործերը և պահում է հաշիւները։ Նա ընդունում է բոլոր դրամական վճարները և նուէրները, ծախսեր է անում Վարչութեան կարգադրութեամբ։



Գանձապահը կազմում է տարեկան մանրամասն հաշիւ գումարների ելևմտից մասին։

§ 17) Ծախսերի համար գանձապահը կարող է իւր մօտ ունենալ մինչև հարիւր րուբլի։ Մնացեալ բոլոր գումարը պահւում է տեղական բանկերից մէկի մէջ յանուն Ընկերութեան ըստ որոշման՝ Վարչութեան։ Դրամական արժեթղթերը պահւում են գանձապահի մօտ։

§ 18) Գրապահը պահում է Ընկերութեան գրքերը և հրատարակութիւնները։

§ 19) Բոլոր գրագրութիւնները Վարչութեան մէջ պէտք է կենտրոնանան։

§ 20) Խմբագրական մասնաժողովը բաղկանում է եօթ անդամներից։

§ 21)՝ Խմբագրական մասնաժողովը ընտրում է տպագրուելիք հեղինակութիւնները և նշանակում է հեղինակներին կամ թարգմանիչներին վարձատրութիւն նոցա աշխատութեան համար։ Առանց սորա վճռի ոչ մի գիրք չէ կարող հրատարակուել Ընկերութեան կողմից։

§ 22) Խմբագրական մասնաժողովը իւր միջից ընտրում է Նախագահ և քարտուղար։

§ 23) Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի անդամները ընտրւում են երկու տարով, բայց առաջին տարուայ վերջը իւրաքանչիւրից դուրս են գնում երեքը վիճակով և նոցա տեղը ընտրւում են նորերը. երկրորդ տարին դուրս են գնում մնացած երեքը և նախագահները։

§ 24) Բոլոր վերոյիշեալ պաշտօնատար անձանց ընտրութիւնը կատարւում է Ընկերութեան Ընդհանուր Ժողովում գաղտնի քուէարկութեամբ։

Ծանօթ. Ընտրուած համարւում են այն անձինք, որոնք կստանան ներկայ եղող անդամների ձայների մեծամասնութիւնը։

§ 25) Երկու տարուց յետոյ նոյն պաշտօնատար անձինք կարող են նորից ընտրուել նոյն պաշտօնների համար։

§ 26) Ընկերութեան Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի յարաբերութեանց ձևը որոշւում է փոխադարձ համաձայնութեամբ։ Իսկ նորանց մէջ պատահած բոլոր տարաձայնութիւնները լուծում է Ընդհանուր Ժողովը։

## IV

## ՎԱՐՉՈՒԹԵԱՆ, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԵՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԸ

§ 27) Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը գումարւում են ըստ պահանջման հարկի և նոցա հրաւիրում են իւրեանց նախագահները։

§ 28) Վարչութիւնը և Խմբագրական մասնաժողովը կազմում են իւրեանց նիստերի արձանագրութիւնները, որոնք ստորագրում են բոլոր ներկայ եղող անդամները։

Ծանօթ. Վարչութեան և խմբագրական մասնաժողովի նիստերը կայացած են համարւում, երբ ներկայ են ոչ պակաս հինգ անդամից։



§ 29) Ընդհանուր ժողովները լինում են՝ տարեկան և արտաքոյ կարգի և հրաւիրւում են լրագիրների մէջ տպած յայտարարութեամբ։

§ 30) Արտաքոյ կարգի ժողովները հրաւիրւում են ըստ պահանջման հարկի կամ ոչ պակաս քսանուհինգ անդամների առաջարկութեամբ։

§ 31) Տարեկան Ընդհանուր Ժողովում. ա) Վարչութեան քարտուղարը ներկայացնում է ընդհանուր հաշիւ Ընկերութեան լրացած տարուայ աշխատութեանց, կարգադրութեանց, կայքի և դրութեան մասին. բ) ընտրւում են պաշտօնատար անձինք. գ) հաստատւում է Վարչութեան ծախուց նախահաշիւը և դ) ընտրւում են պատուոյ անդամները։

§ 32) Ընդհանուր Ժողովն ընտրում է իւր համար մի նախագահ։

§ 33) Ընդհանուր Ժողովը կայացած է համարւում, երբ ներկայ եղող անդամների թիւը Թիֆլիզում գտնուող անդամների թուի $^{1}/_{5}$-ից պակաս չէ։

§ 34) Եթէ հրաւիրուած Ընդհանուր Ժողովը չ'կայանայ, Նոր Ընդհանուր Ժողովը կայացած կ'համարուի, մինչև անգամ եթէ ներկայ եղող անդամների թիւը որոշեալ թուից պակաս լինի։

§ 35) Ընդհանուր Ժողովում, նոյնպէս և Վարչութեան և Խմբագրական մասնաժողովի նիստերի ժամանակ խնդիրները լուծւում են ձայների բազմութեամբ։ Իսկ ձայների հաւասարութեան դէպ-

քում նախապատիւ է համարւում նախագահի կողմը։

Ծանօթ. Ներկայ կանոնադրութեան փոփոխութեանց որոշմունքները օրինաւոր համարելու համար պահանջւում է ներկայ եղող անդամների երկու երրորդ ձայների առաւելութիւնը։ Այդ որոշմունքները գործ դնելու համար պէտք է Կովկասեան Փոխարքայի հաստատութիւնը։

## V

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐԸ

§ 36) Ընկերութիւնը ունի իւր կնիքը հետեւեալ մակագրով. «Թիֆլիզի ընկերութիւն հայերէն գրքերի հրատարակութեան։

§ 37) Ընկերութիւնն ամեն տարի ներկայացնում է Թիֆլիզի Նահանգապետին (ռուսերէն լեզւով) իւր անցած տարուայ գործունէութեան հաշուի երկու օրինակ։

§ 38) Ընկերութեան գործունէութեան ընդհատելու միջոցին, այդ դէպքում գումարուած արտաքոյ կարգի ժողովը որոշում է Ընկերութեան բոլոր կայքը յանձնել Հայոց հոգևոր դպրոցներից մինին։

«ГОСУДАРЬ ВЕЛИКІЙ КНЯЗЬ НАМѢСТНИКЪ уставъ сей изволилъ утвердить».

Начальникъ Главнаго Управленія

Генералъ-Лейтенантъ *Старосельскій.*

*31 января 1880 г.*

г. Тифлисъ.

# УСТАВЪ

## „Тифлисскаго общества изданія армянскихъ книгъ“.

## I

## Цѣль, составъ и средства Общества.

§ 1) „Тифлисское общество изданія армянскихъ книгъ“ учреждается въ г. Тифлисѣ и имѣетъ цѣлью обнародывать на армянскомъ языкѣ книги какъ оригинальныя, такъ и переводныя.

*Примѣчаніе:* Изданія Общества подлежатъ общимъ постановленіямъ Уст. Ценз.

§ 2) Общество состоитъ изъ членовъ дѣйствительныхъ, постоянныхъ, почетныхъ и со-

трудниковъ. Членами могутъ быть лица обоего пола; число членовъ не ограничено.

§ 3) Денежныя средства Общества состоятъ: а) изъ ежегодныхъ и единовременныхъ взносовъ, б) изъ денегъ, выручаемыхъ отъ продажи изданій Общества и в) изъ сборовъ со спектаклей, концертовъ, публичныхъ чтеній и другихъ, закономъ дозволенныхъ, предпріятій.

## II

## Объ избираніи членовъ, ихъ правахъ и обязанностяхъ.

§ 4) Въ дѣйствительные, постоянные члены и въ члены-сотрудники избираются Правленіемъ, въ почетные же—Общимъ Собраніемъ.

§ 5) Въ почетные члены избираются лица, которыя, по своимъ личнымъ заслугамъ или по своему общественному положенію, могутъ быть особенно полезны Обществу.

§ 6) Въ члены-сотрудники избираются лица, которыя могутъ быть полезны Обществу своими трудами и знаніемъ. Члены-сотрудники избираются на годъ.



§ 7) Лица, пожертвовавшія не мѣнѣе ста рублей, могутъ быть выбраны въ постоянные члены.

§ 8) Дѣйствительный членъ вноситъ ежегодно по шести рублей.

*Примѣчаніе:* Дѣйствительный членъ, не внесшій годичной платы въ теченіе шести мѣсяцевъ, считается выбывшимъ изъ числа членовъ Общества.

§ 9) Въ Общихъ Собраніяхъ Общества пользуются правомъ голоса избирательнаго наличные члены всѣхъ наименованій и обоего пола и могутъ быть избираемы во всѣ должности Общества.

## III

## О должностныхъ лицахъ и объ ихъ избираніи.

§ 10) Дѣлами Общества завѣдуютъ: а) Правленіе и б) Редакціонная коммисія.

§ 11) Должностныя лица Правленія: предсѣдатель, помощникъ предсѣдателя, два члена, секретарь, казначей и библіотекарь.

§ 12) Правленіе завѣдуетъ хозяйственною частью Общества, повѣряетъ денежные отчеты и суммы Общества, охраняетъ, гдѣ нужно, его интересы, изготовляетъ общій годовой отчетъ

о трудахъ, распоряженіяхъ, имуществѣ, состояніи Общества въ истекшемъ году, представляетъ примѣрную смѣту расходовъ по Правленію на будущій годъ и заботится объ изданіи книгъ, одобренныхъ Редакціонной коммисіею. Всѣ сношенія Общества съ мѣстами и лицами производятся отъ имени Правленія.

§ 13) Предсѣдатель Правленія наблюдаетъ за точнымъ исполненіемъ Устава и постановленій Общаго Собранія, Правленія и Редакціонной коммисіи.

§ 14) Въ отсутствіе предсѣдателя исправляетъ его должность помощникъ предсѣдателя.

§ 15) Секретарь Правленія ведетъ протоколы Общихъ Собраній и Правленія. Онъ завѣдываетъ всею канцеляріею и хранитъ архивъ.

§ 16) Казначей Правленія завѣдываетъ денежными дѣлами и счетами Общества. Онъ принимаетъ всѣ денежные взносы и пожертвованія, производитъ расходы по постановленіямъ Правленія. Казначей составляетъ ежегодный подробный отчетъ о состояніи суммъ и приходѣ и расходѣ ихъ за истекшій годъ.

§ 17) Для авансовыхъ расходовъ казначей можетъ имѣть у себя до ста рублей. Всѣ же



остальныя суммы Общества хранятся въ одномъ изъ мѣстныхъ кредитныхъ учрежденій на имя Общества по опредѣленію Правленія. Денежные документы и цѣнности Общества хранятся у казначея.

§ 18) Библіотекарь хранитъ книги и изданія Общества.

§ 19) Въ Правленіи сосредоточивается вся переписка по дѣламъ Общества.

§ 20) Редакціонная коммисія состоитъ изъ семи членовъ.

§ 21) Редакціонная коммисія дѣлаетъ выборъ сочиненій къ напечатанію и опредѣляетъ вознагражденіе авторамъ или переводчикамъ за трудъ. Безъ ея рѣшенія Обществомъ не можетъ быть издана ни одна книга.

§ 22) Редакціонная коммисія выбираетъ изъ среди себя предсѣдателя и секретаря.

§ 23) Члены Правленія и Редакціонной коммисіи избираются на два года, но въ концѣ перваго года выбываютъ по три члена по жребію и вмѣсто нихъ избираются новые; въ концѣ же втораго года выбываютъ остальные три члена и предсѣдатели.

§ 24) Выборы во всѣ поименованныя долж-

ности происходятъ въ Общихъ Собраніяхъ Общества по закрытой баллатировкѣ.

*Примѣчаніе:* Избранными считаются получившіе большинство голосовъ наличныхъ избирателей.

§ 25) По истеченіи положеннаго двухгодичнаго срока тѣже лица могутъ быть избраны въ тѣже дожности.

§ 26) Порядокъ сношеній Правленія Общества съ Редакціонною коммисіею опредѣляется по взаимному ихъ соглашенію. Всѣ же могущія быть между ними недоразумѣнія разрѣшаются Общимъ Собраніемъ.

## IV

## Засѣданія Правленія, Редакціонной коммисіи и Общихъ Собраній.

§ 27) Правленіе и редакціонная коммисія имѣютъ свои засѣданія по мѣрѣ необходимости и созываются своими предсѣдателями.

§ 28) Правленіе и редакціонная коммисія ведутъ протоколы своихъ засѣданій, которые подписываютсн всѣми наличными членами ихъ.

*Примѣчаніе:* Засѣданія Правленія и Редакціонной коммисіи считаются состоявшимися при присуствіи не менѣе пяти членовъ.



§ 29) Общія собранія бываютъ годичныя и чрезвычайныя, и созываются публикаціей въ мѣстныхъ газетахъ.

§ 30) Чрезвычайныя собранія созываются по мѣрѣ необходимости по усмотрѣнію Правленія или по предложенію не менѣе двадцати пяти членовъ Общества.

§ 31) Въ годичномъ собраніи: а) представляется секретаремъ Правленія общій отчетъ о трудахъ, распоряженіяхъ, имуществѣ и состояніи Общества за истекшій годъ, б) избираются должностныя лица Общества, в) утверждается примѣрная смѣта расходовъ по Правленію и г) избираются почетные члены Общества.

§ 32) Общее Собраніе выбираетъ себѣ предсѣдательствующаго.

§ 33) Общее Собраніе считается состоявшимся, когда число присуствующихъ членовъ не менѣе одной пятой всѣхъ находящихся въ г. Тифлисѣ членовъ.

§) 34) Въ случаѣ, если созванное Общее Собраніе не состоится, то новое Общее Собраніе считается окончательно состоявшимся, хотя бы число присуствующихъ членовъ не достигало опредѣленной нормы.

§ 35) На Общемъ Собраніи, равно въ Правленіи и Редакціонной коммисіи, дѣла рѣшаются по большинству голосовъ. При равенствѣ же голосовъ, перевѣсъ даетъ голосъ предсѣдательствующаго.

*Примѣчаніе:* Для дѣйствительности постановленій объ измѣненіи настоящаго устава требуется принятіе оныхъ большинствомъ двухъ третей присуствующихъ членовъ. На приведеніе сихъ постановленій въ дѣйствительность испрашивается разрѣшеніе Намѣстника Кавказскаго.

## V

## Общія постановленія.

§ 36) Общество имѣетъ свою печать съ надписью: „Тифлисское общество изданія армянскихъ книгъ".

§ 37) Общество ежегодно представляетъ тифлисскому губернатору, въ двухъ экземплярахъ, отчетъ (на русскомъ языкѣ) о дѣйствіяхъ своихъ за минувшій годъ.

§ 38) Въ случаѣ прекращенія дѣятельности Общества, созванное по этому случаю чрезвычайное собраніе рѣшаетъ о передачѣ всего имущества одному изъ армянскихъ духовныхъ училищъ.

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ С.С.Р.А. Публичная Библиотека 7/XI 1922 имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
9965
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0081897

50
8